ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12 փետրվարի 2016 թվականի **թիվ 3** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթների կատարելագործման հարցերով համահավաք աշխատանքային խումբ ստեղծելու մասին

Ի գիտություն ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթների կատարելագործման հարցերով համահավաք աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ) ստեղծելու նպատակահարմարության մասին տեղեկությունները՝

1. Խնդրանքով դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ 30-օրյա ժամկետում Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնել թեկնածություններ՝ աշխատանքային խմբի կազմի մեջ ընդգրկելու համար։

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային՝ ստեղծել

աշխատանքային խումբ եւ հաստատել դրա կազմը՝ հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների առաջարկությունները:

3. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**